№ 143 Օգոստոսի 16 (28) 1880 Օգոստոսի 16 (28) № 143

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաստաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի միացեալ ընկերութիւնը։—Ներքին տեսութիւն։ Թիւրքիայի հայի չարժումը։ Նամակ խմբագրին։ Նամակ Ղզլարից։ Նամակ Ղազախից։ Նամակ Բարֆրուշից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Գամբէտտայի ճառը։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Մի փիլիսոփայական տրակտատի առիթով։

Կ. ՊՕԼՍԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Այն, որի համար մենք այդքան ժամանակ աշխատել ենք, որի անհրաժեշտութեան մէջ երկար ժամանակ աշխատել ենք համոզել Կ. Պոլսի հայերին,—վերջապէս կատարվեցաւ։

Կ. Պոլսի հայոց երեք ընկերութիւնները՝ «Արարատեան», «Դրօշ-բոցասիրաց—Արևելեան» և «Կիլիկեան» միացել են մի ընկերութեան մէջ, ընտրել են ընդհանուր վարչութիւն և կրում են այժմ «Միացեալ ընկերութիւնք հայոց» անունը։

Այդպիսով երեք ընկերութիւնները, որոնց նպատակը մի էր, բայց որոնց ոյժերը բաժանված էին, միանալով կարող են կազմել մի զօրեղ կենտրօնական մարմին, որ աւելի աջողութեամբ կը գործի և միահամուռ կերպով կը տանի Հայաստանի լուսաւորութեան գործը։

Մենք երկար չենք խօսի այդ նոր ընկերութեան մասին։ Ժամանակը ինքն ցոյց կը տայ, որքան արդիւնաւոր էր երեք մարմինների մի զօրեղ կազմակերպութեան մէջ միանալու միտքը։

Յանկանալով կատարեալ աջողութիւն այդ ընկերութեանը, չենք կարող չը ցանկանալ և այն, որ նա իր գործունէութեան ասպարէզի մէջ կողմ գցի բոլոր դաւանական խտրութիւնները հայոց ազգի վերաբերութեամբ և անխտիր կերպով գործելով թէ հայ-լուսաւորչականների, և թէ այլ կրօնների պատկանող հայերի շրջանում, լուսաւորութեան բարիքները սփռի ամբողջ Հայաստանում։

Ինչպէս ընկերութիւնները իրանք միացել են, թող նրանց օրինակին հետևելով, նրանց ազդեցութեանը ենթարկվելով միանան լուսաւորութեան գործի մէջ թիւրքաց Հայաստանի այլ և այլ դաւանութիւններին պատկանող բոլոր հայերն էլ։

Ազգութիւնը թող մի լինի, լուսաւորութիւնն էլ թող մի լինի, չը նայելով որ հայը Հայաստանում կարող է և քրիստոնեայ և մահմետական լինել։

Այն ժամանակ միայն երբ Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնը, հայաստանցի մարդը, ինչ կրօնին և պատկանէր նա, կը մկրտվի մայրենի լեզուի միջոցով ազգային ընդհանուր զգացմունքի, ազգային լուսաւորութեան ընդհանուր աւազանի մէջ,—այն ժամանակ, ասում ենք, թիւրքաց Հայաստանի ինքնավարութեան գործը հիմք կունենայ իր ոտների տակ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԻ ՇԱՐԺՈՒՄԸ

—

«Մշակի» 138-դ համարում տպված Թիւրքիայից (Կ. Պոլսից) Նամակը, մեծ ուրախութիւն պատճառեց ամեն մի ճշմարիտ հային։ Պ. Նամակագիրը գրում է, որ յանուն ազգային վրէժխնդրութեան Թիւրքիայի հայոց զինեալ զօրեղ խմբեր յարձակվել են Վասպուրականի բուրդ գիւղերի վրա, և 7 գիւղ աւերել, ոչնչացրել են։ Արդարև, մեծ նշանակութիւն ունի այս լուրը։ ոչ թէ նորա համար, որ յիշեալ հայերը կոտորել են քրդերին, այլ նորա համար որ նրանք ճանաչել են ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը։ Ուրեմն Թիւրքիայի հայը, թողնելով դարաւոր նախապաշարմունքները, թողնելով ազէտ հողևորականաց քարոզութիւնները, որոնք թշնամուն միայն «օրհնեալ» են քարոզում, այսօր զէնքը ձեռին դիմադրում է և մահացնում է իր արիւնարբու այն թշնամիներին, որոնց սրի տակ այսքան դարեր շարունակ տարել է դառն տանջանքներ և ամօթալի մահ։ Թիւրքիայի հայը հասկացել է, թէ զէնքով միայն կարելի է պաշտպանել իր կեանքը, Թիւրքիայի նման մի տերութեան մէջ, և զէնք բարձրացնելով իր թշնամու դէմ, միայն կարող է գրաւել լուսաւորեալ Եւրօպայի ուշադրութիւնը և ցոյց տալ, թէ հայն ևս ընդունակ է մի քաղաքական ազատ մարմին կազմելու, որովհետև իր թշնամիներին կարողանում է զէնքով պատասխանել, և ոչ թէ միայն լացով և բողոքներով, ինչպէս մինչև ցայժմ։ Այսուհետև թող Թիւրքիան հասկանայ, որ իր հպատակ հայը կարող է ապրել թշնամու հետ իբրև թշնամի, և բարեկամի հետ իբրև բարեկամ և պաշտպան։ Ահա այսօր Վասպուրականցի հայը առաջին քայլն արեց Եւրօպայի առաջ հանդէս դուրս գալու, և այս քայլին դուցէ կը հետևեն Թիւրքիայի միւս հայերը։ Այսպիսի դէպքերում միայն կարող է Եւրօպան իր ուշադրութիւնը դարձնել Թիւրքիայի լծի տակ տանջվող հայի վրա, և նրա վիճակը բարւոքել։

Թիւրքիայի հայը լցրեց բողոքներով և աղերսագիրներով Հայաստանում եղած եւրօպական հիւպատոսարանները, Վանի առաջնորդարանը և Կ. Պոլսի պատրիարքարանը, բայց մինչև այժմս ոչինչ բաւականութիւն չը ստացաւ.... Թիւրքիայի հայը տեսաւ, որ թէպէտ Կ. Պոլսի պատրիարքարանը և Վանի առաջնորդարանը չափազանց շատ են աշխատում, բայց հասկացաւ, որ առանց իր մասնակցութեան գործը շատ դանդաղ է ընթանում։ մտածեց ինքն ևս մի կերպով օգնել գործին, և ահա այսօր Վասպուրականցի հայը առաջ է մղում իր ազգային գործը, և յոյս ունի պսակելու այն բաղձանքը վերջապէս, որին մինչև այսօր ցանկանում են և աշխատում են հայոց խնդրի դիւցազն և ազգասէր Ներսէսը, առիւծասիրտ և անվեհեր Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսը։ Ուրեմն յոյս կայ, որ Թիւրքիայի հայը պէտք է պսակի Ս. Ներսէսի և Խրիմեանի բաղձանքը, և

վող հիմունքների վրա։ Անհերքելի է ուրեմն այն միտքը որ մի անդամ համոզվելով այդ հիմունքների հաստատութեան և բարերարութեան մէջ, մենք պէտք է չը շեղվենք մեր նպատակից, պէտք է առաջ տանենք ազգային լուսաւորութեան գործը հաւատարիմ մնալով մեր նշանաբանին։ Կարճ ասած՝ լուսաւոր ազգ լինելու համար անհրաժեշտ պէտք է հետևենք ամեն մի քայլափոխում ընդհանուր մարդկութեան ուսուցիչ արևմտեան Եւրօպային։

Որքան պարզ և հետևողական է այս տարրական ճշմարտութիւնը, այնու ամենայնիւ դեռ գտնվում են մեր մէջ այնպիսի սրտացաւ մտածողներ (!), որոնք կարծես չը հաւանելով այն ուղղութեանը, որ ընդունել է ազգը առաջադիմական ճանապարհի վրա, իրանց խելքին զօռ տալով համարձակվում են գրականապէս ասպարէզ դուրս գալ անմիտ, ցնդաբանական ծրագրներով։ Այդպիսի ազգի յառաջադիմութեան մասին գլուխ տրաքացնողներից մէկի խելքի ծնունդը ընթերցողը կարող է գտնել «Պսակ» շաբաթաթերթի № 15-ում տպված «Յառաջադիմութեան մասին հայերի հրահանգ» վերնագրով յօդուածը։ Ինչպէս երևումէ այդ յօդուածը շարունակութիւն է, որի սկիզբը դժբաղդաբար ձեռքս չէ ընկել։ բայց որովհետև նա պարունակում է իր մէջ մի առանձին, վերջացրած միտք, ես անկարելի չեմ համարում մի թեթև քննողական հայեացք գցել նրա վրա։

Այս հանճարաւոր յօդուածի տաղանդաւոր հեղինակը ինչպէս երևում է դրել է իրան մի նպատակ ցոյց տալու, թէ հասարակութեան ամեն մի դասակարգութիւնը ինչ պարտականութիւններ ունի և ինչպէս պէտք է կատարի նա այդ պարտականութիւնները, որ «ազգի յառաջադիմութիւնը իր շարունակութիւնից չը դադարի», որ «ազգը իբրև մարդ (sic) հարկաւոր վայելչութիւններից չը զրկվի»....

Դասակարգութիւնների մէջ առաջինը հայերիններն է։ Այս դասակարգը հեղինակի մտքով «պէտք է գործէ հրահանգ տալով», այսինքն նա պէտք է ուներ դէպի որդոց դասակարգը մանկավարժական պարտականութիւն։

Որովհետև «Մշակի» բոլոր ընթերցողները հաղիւ թէ կարդացած լինեն վերոյիշեալ յօդուածը, ես հարկաւոր եմ համարում դուրս գրել այն վեց գլխաւոր հրահանգները, որոնք—հեղինակի մտքով—«եթէ անթերի կերպով կատարվեն ազգի կատարելութիւն ակներև պիտի երևի ամենին իր արդիւնքովն»։ 1) Հրահանգ՝ քրիստոնէութեան ճշմարիտ հաւատքը, կամ ճշմարիտ աստուածպաշտութիւնը ձեռքէ չը թողելու համար 2) Հրահանգ՝ ճշմարիտ քրիստոնէութեան պարզ կանոնների վերա աւելորդ կամ նորանոր արտաքոյ աւետարանին կանոններին տեղի չը տալու մասին։ 3) Հրահանգ՝ երկրին (ուր որ կը բնակին) օրինաց և կարգերին հնազանդ լինելու և նոյն օրինաց սահմանները ճշդութեամբ պահպանելու մասին։ 4) Հրահանգ՝ իրանց հօր և նախնեաց սուրբ յիշատակները անկորուստ պահպանելու մասին։ 5) Հրահանգ՝ ընտանեաց, ազգականաց, ազգին և ամեն ազգերի հետ մարդկային բուն կենցաղավարութեան պահանջածին համեմատ՝ անկեղծ սէր և անխռով խաղաղութիւն պահպանելու մասին։ 6) Հրահանգ՝ վերոյ գրեալ հինգ տեսակ հրահանգները անթերի կերպով կատարելու միջոցը ձեռքէ չը թողելու, կամ եթէ թողել են՝ վերստին ձեռք բերելու մասին։

Ինչպէս տեսնում է ընթերցողը յօդուածի հեղինակը այդ հրահանգներով պահանջում է, որ մեր հայրերը աւանդեն իրանց որդոցը հետևեալ գիտութիւնները՝ աստուածաբանութիւն, իրաւագիտութիւն (հարկի և պատուի օրէնք, հողային օրէնք, օտարաց յարաբերութեան օրէնք, դատաստանական օրէնք և այլ տեսակ օրէնքներ, որ երկրի պետութիւնից հաստատվում են և պաշտպանվում։ Այս օրէնքները համարում է ինքը հեղինակը), գրականութիւն և պատմութիւն—ինչպէս բացատրում է հեղինակը 4-դ հրահանգը—և ճշմարիտ բարոյականութեան սկզբունքներ։ Ընթերցողը այս տողերը կարդալուց յետոյ անշուշտ բերանը կէս դաղ բաց կանի և այս հարցը կը տայ ինքն իրան՝ տո, հիւանդ չը լինի այդ պարոնը։ Ճշմարիտ ես ինքս շատ մտածել եմ այդ հարցի վրա, բայց ոչ մի եզրակացութեան չեմ հասել։ Աւելի լաւ է մի փոքր նրա հետ մաշահաթ անենք, կարելի է բանը պարզվի....

Պարոն Կ. Ս., եթէ դուք, փառք Աստուծոյ, ողջ և առողջ էք, եթէ Երևանի շրջը ձեր ուղեղի վրա

ՀՈՍՔԱՏՈՒՆ ԱՆՈՒՇ ԱՂԱՅԱՆ

Հոսքատուն Անուշ Աղայան Հոսքատուն Անուշ Աղայան Հոսքատուն Անուշ Աղայան

լով, որ օրիորդը սովորականից աւելի ուշացաւ, կտուրի պատուհաններից նայում են, և տեսնում են նա ընկած է աւազանի մօտ։ Իսկոյն իմացում են տալիս ոստիկանութեանը, որը գալով բաց է անում դռները, գտնում է օրիորդին անձնասպան եղած։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մի քանի չուշեցի վաճառականներ շնորհակալութիւն են յայտնում Շուշի քաղաքի բնակիչ մեծապատիւ Մինաս Խունդնեանցին, նորա այս ձմեռ կատարած բարերարութիւնների համար, որով այս տարվայ թանգութեան ժամանակ թեթևացրեց աղքատ ընտանիքների ապրուստի դժուարութիւնները, թէ իր սեպհական ծախքերով և թէ մի քանի պարոնների հետ բարեգործական նպատակով ժամանակաւոր ընկերութիւններ կազմելով։

—

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ այս օրերում վախճանվեցաւ Թումբուլ գիւղի բնակիչ Բաղալ Շ. Կոստանեանցը, որ թողեց մօտ 30,000 ռուբլի հարստութիւն։ Հանգուցեալը իր հարստութիւնից կտակել է 5000 ր. Հին-Նախիջևանի հոգևոր դպրոցին, 3000 ր., Երուսաղէմի Ս. Յակոբայ ուսումնարանին և Էջմիածնի վանքին 100 ր.։ Հանգուցեալը յայտնի էր Նախիջևանի գաւառի մէջ, որպէս մի չափազանց հանգիստ և խնայող մարդ, նա իր կեանքում արած է բաւական բարերարութիւններ։ Բայց նամակագիրը զարմանք է յայտնում, ինչպէս է պատահել, որ հանգուցեալը իր կտակի մէջ մոռացել է իր ընակված Թումբուլ գիւղի ողորմելի ուսումնարանը։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ երեք թուրքեր մանելով մի ռուս աղջկայ տուն, սկսում են մրմեանց հետ վիճել, որպէս զի գրաւեն այն աղջկան։ Վէճը հասնում է կռուի և թուրքերից երկուսը սպանվում են։ Կռուի ժամանակ աղջկան էլ վիրաւորում են։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ հոգևոր դպրոցի նոր ընտրված հոգաբարձութիւնը խիստ եռանդով և խղճմտաբար աշխատում է։ Անցեալ տարի այդ դպրոցում կար մի վարժապետ, պ. Ադամեան, որ ամենայաւ վարժապետներից մէկն էր։ Պ. Պռօշեանց նրան հրաժարեցրեց պաշտօնից իր անձնական անհամակրութեան պատճառով։ Նոր ընտրված հոգաբարձութիւնը կրկին պաշտօնի հրաւիրեց յիշեալ վարժապետին, բայց յանկարծ Էջմիածնից ստացվում է հրաման պ. Պռօշեանցի թելադրութեամբ յօրինված, որով Հին-Նախիջևանի հոգաբարձութեանը արգելվում է ընդունել իր դպրոցում պ. Ադամեանցին։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Կարդացինք «Մեղու Հայաստանի» լրագրում, որ Բաթումի հանգից գաղթած աղքացիները նորից վերադառնում են իրանց հայրենիք և որ իբր թէ այդտեղից գաղթողները դադարել են գաղթելուց։ Այդ լուրը բոլորովին սուտ է։ Ոչ մի ընտանիք մինչև այսօր դեռ չէ վերադարձել։ Իսկ եթէ աղքացիները իրանց ընտանիքը Թիւրքիայում թողած վերադառնում են Բաթումի գաւառը աւազակութիւն անելու համար, այդ չէ նշանակում թէ գաղթականները վերադառնում են։ Արդէն այդ տեսակ աւազակների մի խումբ իր աւազակութեամբ և մարդասպանութեամբ այնքան սարսափեցրել է ամբողջ գաւառը, որ տէրութեան ծառայողները ճանապարհորդելու ժամանակ իրանց հետ առնում են քսան կամ երեսուն ձիաւորներ։ Այնուամենայնիւ այդ աւազակներին աջողվել է նորերումս չարագործութիւններ կատարել։ Արդվինի գաւառապետի թարգման պ. Ջափարիձէ Հերերումս սպանվեցաւ աւազակների ձեռքով, իսկ մի պարոն որ մսի կապալառու է, մերձ ի մահ վիրաւորվեցաւ հրացանի գնդակներով։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Փարիզից։

Գրեվիի այցելութիւնը Շերբուր քաղաքին Ֆրանսիական Հանրապետութեան պատմութեան մի դարեզլուխ կարող է դառնալ։ Այդ այցելութիւնը մի այնպիսի հասարակ ճանապարհորդութիւն չէր, որով պետութիւնների կառավարիչները կամենում են տրամադրել հասարակութեանը յօգուտ որ և է ձեռնարկութեան։

Հրաժարվելով ներկայ գտնվել Շերբուր քաղաքի երկու տօներին ի պատիւ Ֆրանսիական նաւատորմի, Գրեվի շուտով հասկացաւ, որ ինքը սխալված է։ Ոչ ոք չէր կարող նախատեսել ոչ այն ահագին ցոյցերը, որով ժողովուրդը, զօրքերը և նաւատորմը հանդիպեցին բարձր իշխանութեան ներկայացուցիչներին և ոչ այն մեծ ազդեցութիւնը, որ գործեց Գրեվի ամբոխի վրա։ Եթէ Շերբուրի տօնին, որ իսկապէս պաշտօնական բնաւորութիւն ունէր, նախագահէր միայն Գամբետտա, Գրեվիի նախագահութեանը վերջ կը դնվէր դեռ ընտրութիւններից առաջ։

Պէտք է նկատել, որ Գամբետտայի վարմունքը Շերբուրի տօների ժամանակ ոչ թէ միայն անբիծ էր, այլ ընդհակառակը ցոյց տուեց նրա բազմակողմանի հանճարի նոր կողմերը։ Գամբետտան առաջին անգամ ցոյց տուեց, թէ ինքը, երբ կամենում է, կարող է յետ քաշուել և երկրորդական դեր խաղալ, թէպէտ նրա ահագին ծառայութիւնները և ինքնուրոյն ասպարէզը իրաւունք են տալիս նրան առաջին տեղը բռնել։

Որքան կամենում են ստախօսին միապետական լրագիրների վարձկան թղթակիցները, բայց Շերբուրի տօների բոլոր անկողմնապահ այցելուները միաբերան հաստատում են, որ Գամբետտայի ներկայութիւնը բոլորովին յետ չէր մղում հանրապետութեան նախագահին։ Գրեվին թէ իր արտաքին տեսքով և թէ վարմունքով արժանաւոր կերպով էր պահում իրան։ Ամենքը նրան համակրում և յարգում են, հէնց որ նրա հետ գործ են ունենում։ Նա բնածին ընդունակութիւն ունի իւրաքանչիւր դէպքին ասել միայն այն, ինչ որ հարկաւոր է։ Ոչ մի աւելորդ խօսք և ոչ մի պակասութիւն չէ կարելի գտնել այն բազմաթիւ ճառերի մէջ, որոնցով նա պատասխանեց իրան յարգողներին։ Թէ ծովապետի, թէ եպիսկոպոսի, թէ քաղաքագլխի և թէ պատգամաւորի հետ խօսելու ժամանակ իւրաքանչիւրին նա կարողանում է յարմար պատասխան տալ։

Նա մեծ հեղինակութիւն ստացաւ իր զբօսանքներով քաղաքի մէջ, ամբոխով շրջապատված։ Ամենից մեծ և անապատելի տպաւորութիւն Գրեվի գործեց Գամբետտայի վրա։ Գամբետտա այժմ նախագահի ամենահաւատարիմ երկրպագու է։ Պատգամաւորների ժողովի նախագահը իւրաքանչիւր դէպքից օգուտ էր քաղում Գրեվիին իր յարգանքը և համակրութիւնը յայտնելու համար։

Այդ միակ լաւ տպաւորութիւնը չէ, որ գործեց Շերբուր քաղաքը Գամբետտայի վրա։ Ժողովրդական ցոյցերը յարգող մարդիկ չեն կարող ընդդիմանալ ժողովրդական շնորհակալութեան արտայայտութեանը, չեն կարող չը զգալ, որ վերջ ի վերջոյ իրանք պարտական են մնում իր անսահման հաւատարմութիւնը յայտնող հարիւր հազարաւոր ամբոխին։ Բաւական է կարդալ Գամբետտայի արտասանած զեղեցիկ ճառերը իմանալու համար, թէ նա ընդհանուր կանոնից բացառութիւն չէ կազմում։ Նրա արտասանած ճառերը սրտի խորքից են բղխել։

Պէտք է ցանկանալ որ այդ տպաւորութիւնները չանհետանան քաղաքական մանր ինարիզների պատճառով։ Գամբետտան Շերբուրից աւելի համեստ վերադարձաւ։ Գրեվի հասկացաւ, որ նա կարող է մի և նոյն ժամանակ համեստ լինել և պետութեան գլխաւորի դերը խաղալ։ Այս երկու հետեւանքները բաւական են, որ Շերբուրի տօները բարերար ազդեցութիւն գործեն Ֆրանսիական Հանրապետութեան ապագայի վրա։

Ծովապետ Ժորեգիբերի հետեւեալ ճառով ընդունեց Գրեվիին «Կոլբեր» նաւի վրա։

«Պ Նախագահ, ես բաղդաւոր եմ, որ կարող եմ մեր ազգային նաւատորմը հիմնողի անունը կրող նաւի վրա ներկայացնել ձեզ Ֆրանսիական նաւատորմի ներկայացուցիչներին։ Շնորհակալ եմ այն պատիւ համար, որ այսօր դուք մեզ արիք։ Դուք այստեղ տեսնում էք այնպիսի մարդկերանց, որոնք հեռու են կուսակցութիւններից և խուլ են դէպի քաղաքական կրքերի հրաւէրքները, որոնք մի միտք, մի ձգտումն, մի բարձր նպատակ ունեն՝ պաշտպանել հանրապետական Ֆրանսիայի դրօշակը, որ հպարտութեամբ ծածանվում է մեր նաւերի վրա։ Նրանք խորին յարգանքով վերաբերվում են դէպի այն դրօշակը, որ հովանաւորում է ազատութեանը, քաղաքակրթութեանը և մեր թանգագին հայրենիքի պատուին։»

Գրեվի պատասխանեց։ «Պ. մինիստր, նաւատորմի հրամանատար և օֆիցերներ։ Շնորհակալ եմ այն զգացմունքների համար, որ յայտնեց ինձ մեր նաւատորմը։ Ես ուրախութեամբ հանդիպում եմ Ֆրանսիական նաւատորմին, որովհետև կարող եմ յայտնել նրան իմ յարգանքը, շնորհաւորութիւնը, և հաւանութիւնը։ Սենատի և պատգամաւորների ժողովի նախագահների ներկայութիւնը ապացուցանում են, որ ես հանրապետութեան բոլոր բարձր ատիճանաւորների զգացմունքներն եմ յայտնում։ Դեռ ևս շատ բան կայ անելու Ֆրանսիական նաւատորմի համար և հէնց որ մենք կը կարողանանք մեր եկամուտի մի մասը նուիրել նաւատորմին, կառավարութիւնը անյապաղ կանի այդ բանը և երկիրը նրան կը ծափահարէ։ Ֆրանսիան իր նաւատորմին և զօրքերին միատեսակ է սիրում։ Նրանք երկուսն էլ միատեսակ հարկաւոր են և նա պէտք է նաւատորմի համար նոյնը անէ, ինչ որ արաւ զօրքերի համար։ Ֆրանսիան իր նաւատորմը այն դրութեանը պէտք է հասցնէ, որ նա վտանգների և ծանր աշխատանքների չենթարկվի։ Մեր նաւատիները ամենաբարձր քաջութեան են հասել։ Նրանք ապացուցին այդ հանգամանքը, երբ մեր տարաբաղդութեան ժամանակ շտապեցին պաշտպանել Ֆրանսիան և մեր զինուորների կարգերում պատերազմում էին անձնազոհութեամբ և քաջութեամբ։ Դա Ֆրանսիական նաւատորմի պատմութեան ամենափայլուն էջերից մէկն է։ Այդ վարմունքը անջնջելի տառերով դրոշմված է ազգի սրտի վրա։»

Անգլիական կառավարութիւնը ուղարկել էր իր նաւերը ծովային մինիստրի առաջնորդութեամբ, որ ի պատիւ Գրեվիի տուած հացկերոյթին ասաց հետեւեալը. «Եթէ առաջ անգլիացին գար Ֆրանսիա և նրա նաւատորմը այսպէս ուժեղ տեսնէր, նա իր կառավարութենից փող կը պահանջէր անգլիական նաւատորմը զինաւորելու համար, որովհետև 50 տարի առաջ այդ երկու նաւատորմերը պատերազմում էին։ Այժմ հանգամանքները փոխվել են։ Անգլիացիները ուրախութեամբ են տեսնում ձեր նաւատորմի զարգանալը։ Վաթսուն տարի է, ինչ Ֆրանսիան և Անգլիան չեն պատերազմում միմեանց հետ և այդ հանգամանքը յաւիտենական խաղաղութեան գրաւական է։ Մեր կառավարչական հիմնարկութիւնների նմանութիւնն էլ խաղաղութեան մի այլ գրաւական է ներկայացնում։ Դրանք թէև ձևով զանազանվում են, բայց նոյն ազատամիտ հիմունքների վրա են հաստատված, որոնք այժ են տալիս Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութեանը քաղաքակրթութիւնը փառաւորելու համար։» Այդ հացկերոյթի ժամանակ ամենանշանաւոր տօստը Գամբետտան առաջարկեց ի պատիւ հանրապետութեան նախագահի։

«Այն ժամանակից, ասաց Գամբետտա, երբ Ֆրանսիան իշխանութիւն տուեց Գրեվիին, նրա անունը խորը տպաւորվեցաւ բոլոր Ֆրանսիացիների սրտերի մէջ և երկրին ա-ռած նրա ահագին ծառայութիւնները ըստ արժանոյն գնահատվում են։ Երկրի ապահովութեան գրաւականը մենք նրա մէջն ենք տեսնում, որ Գրեվին միշտ ազդում է այն գործերի վրա, որոնք շօշափում են հանրապետական հիմնարկութիւնների հաստատութիւնը և ազգային ոյժերի զարգացումը։ Նա Ֆրանսիացի չէ, ով շնորհակալ չէ ամենքից յարգված նախագահ Գրեվիին։»

ԳԱՄԲԵՏՏԱՅԻ ՃԱՌԸ

—

Շերբուրի մէջ ի պատիւ Գամբետտայի տուած հացկերոյթի ժամանակ պատգամաւորների ժողովի նախագահը երկու ճառ արտասանեց, որոնցից, մէկով նա գովում էր Գրէվիին, իսկ միւսով պատասխանեց Շերբուրի պատգամաւորին։ Ահա երկրորդ ճառը։

«Ես չափազանց շարժված եմ այն խօսքերով, որ իսկոյն արտասանվեցան և մանաւանդ այն ընդհանուր հաւանութեամբ, որով ընդունվեցան այդ խօսքերը։ Ես երբէք չեմ մոռացել, թէ ես ով եմ, որտեղից եմ դուրս եկել և ուր եմ գնում։ Ես գիտեմ, որ դուրս եմ եկել աշխատող ժողովրդի ամենայետին կարգերից և ես ամբողջապէս նրան եմ պատկանում։ (Ծափահարութիւններ)։ Ոչ այն խաւար օրերի ժամանակ, որ դուք ինձ յիշեցրիք, ոչ էլ այժմ ես դիկտատուրայի չեմ ձգտում. ես ցանկանում եմ ժողովրդի ծառայ լինել և իմ տեղը ծառայել (Ծափահարութիւններ)։ Այստեղ յիշվեցաւ տանջանքների այն ժամանակամիջոցը, երբ տաս տարի առաջ իմ սրբազան պարտականութիւնը կատարելու համար ես եկայ Շերբուր։ Բաղդը մեզ դաւաճանեց, բայց ահա տաս տարի է, ինչ մենք ոչ մի կռուար բառ չենք արտասանել։ Ժողովրդների պատմութիւնների մէջ բոպէներ են լինում, երբ իրաւունքը ժամանակաւորապէս խաւարվում է, բայց այդ մռայլ բոպէների ժամանակ ժողովրդները իրանք իրանց սեփական իշխանաւորներ պէտք է դառնան և անձնաւորութիւններից չը պէտք է ըսպասեն ազատութիւնը։ Նրանք պէտք է ընդունեն հաւասարիմ օգնութիւնը և մերժեն ամեն տեսակ միապետութիւն։ Նրանք պէտք է սպասեն հանգստութեամբ, հաշտեցնեն բոլոր ձգտումները, պահպանեն իրանց ձեռքերի և զէնքի ազատութիւնը։ Իրաւունքը միակ է, որ կարող է տալ ամենամեծ բաւականութիւն. մենք կամ մեր երեխաները կարող ենք յուսալ, որովհետև ապագան բաց է ամենքի համար։ (Այս ակնարկութիւնը Ալզաս և Լոտարինգիան Ֆրանսիայի հետ միացնելու մասին ծածկվեցաւ ոգևորված ծափահարութիւններով)։ Այդ կողմից մեզ արած նախատինքին ես մի խօսքով կը պատասխանեմ։ Մի քանի անգամ ասել են, որ մենք կողմնապահ ենք դէպի մեր զօրքերը, դէպի այն զօրքերը, որոնց մէջ գտնվում են ազգային բոլոր մեր ոյժերը, երկրի ամենալաւ արիւնը։ Մեզ մեղադրում էին, որ մենք շատ ժամանակ ենք նուիրում պատերազմական արհեստին։ Մենք այդ պատերազմի համար չենք անում. այդ կիրքը մեզ ներշնչված է անհրաժեշտութեամբ բարձրացնել Ֆրանսիան, որ ընկած է, և տալ նրան իր վայել տեղը աշխարհի մէջ։ Մեր սրտերը այդ նպատակի համար են բաբախում և ոչ թէ մի արիւնաներկ գաղափարի ձգտումից։ Մենք կամենում ենք անմատչելի անել այն, ինչ որ մնացել է Ֆրանսիային։ Մենք ցանկանում ենք յուսալ ապագայի վրա և սպասել, եթէ աշխարհի մէջ կայ արդարութիւն և նա երևում է նշանակված օրին և ժամին։ Այսպիսով են ստացվում, պարոններ, պատմութեան իսկական դափնիները։

«Պատմութիւնը մարդկերանց և անցքերի վերջնական դատաւորն է։ Մինչդեռ մենք ապրողներս արևի և շուաքի մասի վրա միատեսակ իրաւունքներ ունենք, մնացածը ինքն իրան է գալիս։ Շնորհակալ եմ, պարոններ, և խնդրում եմ յայտնել ձեր համաքաղաքացիներին, թէ մենք ինչ ոգով ենք միմեանց հանդիպում։»

Այս ոգևորված ճառը մեծ տպաւորութիւն գործեց ներկայ եղողների վրա։ Գամբետտան կարողացաւ շարժել իր ունկնդիրների ամենազգայուն լարերը, ծափահարութիւններ ստանալ և չասել ոչ մի խօսք, որ կարողանար վիրաւորել Գերմանիային։ Ամբողջ մամուլը այդ ճառին տուեց իր հաւանութիւնը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՏՆՈՒԵՑԱԻ

12-ին այս օգոստոս ամսի, առաջին սահմանին գինի ձաշին Նագոր Գրիգորիչ Յարութիւնեանցի մաղազինի առաջը յանկէպ ներքևի քարվանսարային Արծրունոյ, գտաւ դերահասակ աշակերտ նրա Սեդրակ Պետրոսեանց, մի բումաժնիկ զանազան վէքսիլներով 60 բուբլի, բօսպիսկաներով 300 բուբլի, ուրիշ մի վճարած վեքսիլ 1085 բուբլի և այլ բօսպիսկաներ թուով 43 հատ, նմանապէս մարկայք և պատրաստի փող 73 բուբլ. սրա կորցնողն հրավիրվում է յիշեալ Յարութիւնովի մաղազինն ապացուցութիւններով նրան պատկանելութեան այն կորուսեալ բումաժնիկի, վասն ստանալոյ:

3—3

ՆԵՐՍԷՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ

«ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-Կուկիայում Աղէքսէյևսկի փողոցի վերայ Ռոստոմ Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն. ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթոշակ աշակերտներ:

5—6 (2)

Այս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բէլախեանցի մասնաւոր ուսումնարանում կը սկսուին նորեկ աշակերտների ընդունելութիւն: Ուսումնարանը պահպանում է գիշերօթիկ և ընդունում կիսաթոշակ աշակերտներ, պատրաստելով նրանց Տփխիսու բոլոր միջնակարգ դպրոցների առաջին և երկրորդ դասատանց համար:

4—6

Նուազով լոյս կը տեսնէ ԴԱՆԵԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱԳՐԱԾ ժողովրդական զորձածական երգերի

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐԱԿԸ

Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանճեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ագնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Բաժակներ առնունք, եղբա՛ր»
4) Մեր Հայրենիք, Թշուառ անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի բուբլի. ցանկացողները ստանալ դաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Յուրաը փչեց» և 4) «Ծիծեռնակ» պէտք է ուղարկեն մի բուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖՐԷՅԳՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆրէյգունի նոր երգարանը, պէտք է ուղարկեն մէկ բուբլի և 30 կոպ. հետևեալ հասցէով: Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Գայանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Վարձելեանը իր զերդատան մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

4—5

Մի երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն, կամենում է տեղ ունենալ, կարող է և Գործակատարի կամ կանոնաւորշէլիկի պաշտօն կատարել. հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:

1—5

ՁԱՆՁՈՒՂԱՁՕՎԻ ՄԵԾ ՄԱՂԱԶԻՆՈՒՄ շաբունակվում է վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրի, թէ բակում և թէ մաղազինում:

3—4

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախվում է 225 բուբլով վարագոյրներ շինելու մի ՄԵՔԵՆԱՅ: Ծախողը յանձն է առնում նրա գործադրութեան մասին սովորեցնել առնողին:

Դիմել Յովսէփ ՄԱՍԿԵՐՊԱՑԻՆ, Մուխրանովի փողոց, Սօլդատսկի բազարի անկիւն Գամբարովի տանը, № 8.

2—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀՅԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շանմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Կզօրով վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի ներքին հ., Շանէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ.զօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շանէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ.զօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւոտեան 0 բրեխատ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի Հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Աստուր Խաչատրեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան աբք եպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին, Արճարան Հայոց 'ի Կարին, Սոփեալ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրելոյ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Գ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Մելիքանեանց

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՒ ՎԵՐՋԱՑՐԱԾ

Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՃԻԱՆՋԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

12—22

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ ԹԷՅ ուղղակի թէյագործներից, նոյնպէս ՅԵՏՐԱԴ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբոլեան ՓՕՇԻ և ՀԵՂՈՒԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

2—10

Дозволено Цензурою 15 Августа 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона